

ՊԱՐԻԶԻ ՄՈԴԱՆԵՐ

№ 2 փետրուար 1900 փետրուար № 2

ՊԱՐԻԶԻ ՄՈԴԱՆԵՐ

—

ՁԵՒ 1. Ձրջազգեստ մոխրագոյն մեետաքսից, զարդարուած նեղ երիզներով, Փօտին թաւշեայ, Օձիքը երեք շարք թաւշեայ երիզով։ Պլխաշուրը թաւշեայ հանգոյցով փետուրներով զարդարած։

ՁԵՒ 2. Մանկահաս աղջկայ վերարկու մուգ-կապոյտ մահուդից։ Կրկնակի թևերով, որոնցից մէկը կոր, միւսը քառակուսի։ Օձիքը կանգուն, բարձր, Պլխարկը ժապաւէնով և փետուրներով զարդարած։

ՁԵՒ 3. Վերարկու աղջկայ համար—բաց գոյն մահուդից, մանրակար երիզանման, Օձիքըն ու կուրծքը մորթուց։ Կռները նեղ. Ձրջազգեստը կարճ, շոտլանդական կտորից։ Պէտք է $2^1/_2$ արշ. հաստ մահուդ։ Պլխարկի շուրջը շղարշ, կողքից մի փետուր։

ՁԵՒ 4. Մանուկի համար վերարկու կարմիր մահուդից, կամ բարակ դրապից։ Մանրակարով նախշած։ Պլխարկը սպիտակ մետաքսով զուգած։

ՁԵՒ 5. Պլխաշուրտոկ. Թաւշից զարդարած ծաղիկներով.

ՁԵՒ 1. Ձրջազգեստ մոխրագոյն մեետաքսից.

ՁԵՒ 6. Թեւ հանդիսաւոր երջալգեստի համար. Զուգած ծաղկեայ գիրլիանդներով ուսի վրայ ներքևից տիւլի հանգոյց.

ՁԵՒ 7. Կարճ թեւ բաւոից. Պաճուճանքը Լիւդովիկոս XVI-ի հանգոյց և երիզ։

ՁԵՒ 8. Թեւ մեետաքսից իղանցքներով. Ետևից բաց, քառաձև քղանցքով հիւսած. երեք տեղից հանգոյց ուսի, թևի և ձեռքի վրայ.

ՁԵՒ 9 Թեւ բացգոյն մեետաքսից եւ ժանեակից. Զարդարուած ֆիլով՝ թևի մէջտեղը և վերջում թևթև հանգոյց։

ՁԵՒ 10. Թեւ հանդիսի համար, վենետիկեան ժանեակից. քառաձև ժապաւէնով հիւսած ուսագլխին և կռանը հանգոյց։

ՁԵՒ 11. Թեւ պարահանդեսների համար. Թեթև շղարշից լայն, արձակ հանգոյց, ամրացրած ծաղկանման մանր պաճուճանքով։

ՆՈՐ ՍԱՊՈՒԱԻՄ

(Տիկին Միրզաջանխանեանի ննջասենեակում)

(Ըստ Մարսել Պրեվոյի)

(Դիշերւայ ժամի տասնևմէկին երեսուն երկու տարեկանի մօտ տիկին Սուսաննա Մարտինովնա Միրզաջանխանովան կէս հագնւած նստած է իր հարուստ մահճակալի վրայ։ Մի մեծ լամպ լուսաւորում է սենեակի ճոխ կահկարասիքը։ Մի մեծ սեղանի վրայ գեղեցիկ շիշեր, տուփերի և վրձինների մէջ երեւում է և՛ մի շքեղ ապարանջան։

Խորհրդաւոր լռութիւն. ժամացոյցը չխկչխկում է։

Սուսաննա Մարտինովնան գլուխը ձեռների մէջ առած մտածում է։

Նա գեղեցիկ է։ Ունի սև և հարուստ գիսակներ։ Նա յուզւած է երևում։ Այտերը վառւում են)։

ՏԻԿԻՆ ՄԻՐԶԱՋԱՆԽԱՆԵԱՆ

(Յանկարծ ձեռքը հեռացնում է գլխից ու դարձեալ մօտեցնում է ճակատին կարծես մի միտք վանելու համար։ Նա կանգնած է շփոթւած)։

Այժմ... Եթէ յանկարծ ամուսինս գայ, եթէ իմանայ ճշմարտութիւնը... արդեօք քաջութիւն պիտի ունենամ նրա երեսին նայելու... (պառւզա։ Դողալով) Աւելի լաւ է... տափը մտնեմ... «Ախ, դու թշւառական, կասի նա... անարժան, անպատիւ արարած... դու ինձ խաբում ես... հմ...»։ Եւ կաւելացնի հայհոյանքների մի կոյտ... (մտածում է ու սարսռում) իսկ եթէ ասիացու կոպտութեամբ քացիներ հասցնէ երեսիս, կոդքիս, մէջքիս... ուֆ...

(Յուզւած մարդ է գալիս սենեակում։ Շփոթւած է։ Կարծես մի անցք է փնտռում սենեակից դուրս գալու)։

ՁԵՒ 3. Վերարկու աղջկայ համար։

ՁԵՒ 2. Մանկական աղջկայ վերարկու մուգ-կապոյտ մահուդից։

ՁԵՒ 4. Մանուկի համար վերարկու.

Տիկին Լենսկայան իր կաւալէրների հետ ազատ մարդ է գալիս. թատրոն, կլուբ, ցիրկ, երեկոյթ, գնում է վերջապէս ուր որ քէֆը տալիս է... նա ճաշում է պարտիզում, ճաշարաններում, հիւրանոցներում... մինչդեռ ես... վախենում եմ... սոսկում եմ իմ ամուսնուց... Տէր Աստւած... ինչու այսպէս է... որովհետև նա օտարուհի է, իսկ ես հայ... ինչ սև է հայու ճակատագիրը... ինչու մենք ստրուկ ենք հին նախապաշարումներին... ինչու մենք զրկւում ենք քաղաքակրթութեան մեզ տւած բարիքներից...

(Կասկածով չորս կողմն է նայում)։

Ձօռով չէ... չեմ սիրում նրան... մէկ էլ տեսար կը մտնի հաստ փորով, ծանր շրջելով ու կըսկսի հայերէն կոտրատել, այն էլ ինչ հայերէն... պարաքաղցու լեզու... «Ախչի, ըստհէնց արա, ընգհէնց արա... եկ ըստեղ, քընա... խօխօրցը չոր ըս զարկալ... Խչ ըս սօր ըտհէնց.. (պառւզա) մինչդեռ նա, նա, այդ ֆրանտ Միխայիլ Պաւլովիչը հրաշալի ռուսերէն է խօսում... խօսելիս էլ այնպէս է կոտրատւում. այնպիսի ձևեր է անում, մանաւանդ երբ ասում է «Սուսաննա Մարտինովնա, ձեզ պատւում եմ...» չեմ իմանում ինչու չեմ գժւում... արդեօք

ՁԵՒ 5. Գլխարկ-տոկ

որ մեծ արտիստից է սովորել իր ձայնի մէջ այդպիսի յուզող տոն դնել կամ այնպիսի վայելուչ շարժումներով արտայայտել իր հոգու, իր սրտի... Էհ, ինչ ասեմ... ով կարող է Միխայիլ Պաւլովիչի բարեմասնութիւնների մասին խօսիլ. հէնց իր անունն էլ շատ գողտրիկ... Միխայիլ Պաւլովիչ... հրաշալի է... իսկ նրանը... Թորոս Կիրակոսովիչ... եակ... իրան պէս զգալի է... (հաղցրութեամբ) Միխայիլ Պաւլովիչ .. (կոճ) Թորոս Կիրակոսովիչ...

(Նստում է սեղանի առաջ և մտածում է)։

Յետոյ էլ զարաբաղցիները ասում են, որ հաւատարիմ լինեմ, սիրեմ հաստափոր Միրզաջանխանովին և հեռացնեմ ինձանից Պետրովին, իմ պաշտելի Պետրովին... խեղճ... գէթ եթէ ինձ չըսիրէր... մի ժամ առաջ այստեղ էր. այս սենեակում, երկուքս առանձին էինք... Թորոս Կիրակոսովիչը կլուբում էր... հնդամեայ Սաթենիկան բօննա Լիզայի հետ Կարամիրովների մօտ ուղարկեցի, որպէս զի... նա՝ եկաւ և...ախ... ինչ տպաւորութիւններ թողեցին ինձ վրայ նրա առաջին սիրալիր ցոյցերը... էգուց էլ տեսնելու ենք իրար .. բայց...

(Մատը դնում է աչքունքին)։

Կարող է ամուսինս իմանալ և...

(Մտածում է)։

Էգուց Թորոս Կիրակոսովիչը էլի այս ժամիս կլուբում կըլինի.. խոհարար Մարկոսը իմ գաղտնիքը չի յայտնել ուրիշին... Լիզային էլ Սաթենիկայի հետ կուղարկեմ մի ուրիշ տեղ և դարձեալ առանձին... դարձեալ կարող եմ ընդունել Միխայիլ Պաւլովիչին... Յարեւաններն էլ այդ ժամին կամ թատրոնում, կամ ցիրկում կամ կլուբում կըլինին... հոգ չէ տանը լինին... կարտի սեղանի շուրջը հաւաքուիլ աւելի լաւ է նրանց համար քան... Այո, հրաշալի գիւտ է... իրան յայտնեմ այս որոշումս...

(Նստում է ու սկսում է դրել)։

«Սիրելի Միխայիլ Պաւլովիչ!»

«Ըզգիտէք, թէ որքան տխուր եմ. Դուք անգթաբար ինձ տանջում էք ձեր աչքերով, ձեր ճաշակով և որ գլխաւորն է՝ ձեր «Սուսաննա Մարտինովայով»։ Ես ձըգտում եմ դէպի ձեզ, բայց յիշողութիւնը, թէ ես Թորոս Կիրակոսովիչ Միրզաջանխանովի կինն եմ. ինձ չի թոյլ տալիս մինչև տակը խմելու այն քաղցրութիւնը, որ տալիս է ինձ ձեր ներկայութիւնը, բայց այնուամենայնիւ այդ բանը ինձ չի արգելում ձեզանից խնդրել, որ վաղը ժամի 9-ին մեզ մօտ գաք. Սպասում եմ ձեզ անհամբեր և դարձեալ կրկնում եմ, որ պաշտում եմ ձեզ և դէպի իմ ամուսինը տածում եմ զգւանքի ամենախոր զգացում։

«Սուսաննա Միրզաջանխանովա»

(Վերջը միւս անգամ)

Գ. Ղրիկեան

ՁԵՒ 6. Թև հանդիսաւոր շրջազգեստի համար.

ՁԵՒ 7. Կարճ թև թաւշից։

ՁԵՒ 8. Թև մետաքսից քղանցքներով.

ՁԵՒ 9. Թև բացգոյն մետաքսից և ժանեակից։

ՁԵՒ 10. Կարճ թևք։

ՁԵՒ 11. Պարահանդէսի թևք։

ՁԵՒ 12. Մանկական զգեստ բրդեայ կտորից։

Այլ եւ այլ

Ռուիկաանական հնծանիւ։ Հեծանւի գործածութիւնը քանի գնում, այնքան աւելի գործնական և հետաքրքիր ձևեր է ստանում։ Ըէ այդ մի այն առաջ Ամերիկայում։ Նոր աշխարհը ձգտում է միշտ և միշտ նորութիւնների։ Օհայօ նահանգի Դայտոն քաղաքում „Պողպատէ նրժոյգով„ է զինուել նաև տեղական ոստիկանութիւնը, որով և բանտարկեալին մէկից միւս տեղն է փոխադրում։ Հեծանւի առջևը և ետևը նստում են մի-մի ոստիկանական գործակալ, իսկ մէջ տեղը բանտարկեալին են տեղաւորում։ Վերջինս չէ կարող շարժւել և կամ ընդհանրապէս խանգարել տեղափոխելու, քանի որ նրա ձեռքերն ու ոտքերն ամրացրած եւ հեծանւի հետ է կապած։ Առայժմ այսպիսի հեծանիւներ Օհայնում այնքան էլ շատ չեն, սակայն նոյն ձևի հեծան՝ ւներ մըտադիր են գործ դնել նաև միւս նահանգներում։

Աֆօրիզմներ

Այն մարդը, որ չի խոստովանում իր դժբախտութիւնը, չի կարող դժբախտ համարւել։

Քիօրէցիւս

Մարգիկ ճակատագիրը դարձրին մի ամենակարող աստւած, որպէս զի նրա վրայ բարդեն իրանց յիմարութիւնները։

Օֆէցիերն

Աշխարհիս երեսին ամենաերկար և մխիթարիչ ժամանակ ամենակարճ բանը— դա մեր կեանքն է։

Մարտիա



ՁԵՒ 14. Ներքնազգեստ աղջկայ համար.

Սուրհանդակ

Աստրախան. Օր. Մ. Ա. Հարիւր տարուց աւելի է, որ Ամերիկայում հանանց րնդունում են պետական ծառայութիւնների մէջ, միայն նրանց ռոճիկը համեմատաբար մինչև վերջին ժամանակները քիչ էին վճարում քան տղամարդկանց։

Ռոստով. Տիկ. Հ. Գ. Հովհարի լեզուն այնքան էլ բարդ չէ, ուրախութեամբ կրբացատրենք միւս անգամ։ Հովհարը ձեռից վայր գցելը նշանակում է **անապարհիր**, իսկ եթէ ձեռից վայր գցողն՝ ինքն էլ իսկոյն կրբարձրացնէ, նշանակում է **անհրաժեշտ յայտնելիք ունի։**

Բագու. Ա? Ապահարձանի խնդիրն ամենաերկրում էլ կայ։ Լոնդոնում ամուսնացածներից 10—20 տարւայ ստատիստիկը ցոյց է տալիս, որ 38% ապահարզան են վեր առել, ուրեմն $^1/_3$-ականից աւելի։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ



ՁԵՒ 13. Գոգնոց աղաւնի համար։



ՁԵՒ 15. Մանկական զգեստ.

Дозв. ценз. Тифлисъ, 4-го марта 1900 г. Տպարան Գ. Մարտիրոսեանցի Тип. К.И.Мартиросіанца Орбел. ул., № 1—2